ԱՐՁԱՆԱԳՐՈՒԹՅՈՒՆ N ՄԽ-03

Կոռուպցիայի կանխարգելման հանձնաժողովի անդամի թափուր պաշտոնում թեկնածուի ընտրության Մրցութային խորհրդի

Թիվ 3 նիստի

14-ը հունվարի 2026թ.

Ժամը 16:30

Ս.թ. հունվարի 14-ին տեղի ունեցավ Կոռուպցիայի կանխարգելման հանձնաժողովի անդամի թափուր պաշտոնում թեկնածուի ընտրության Մրցութային խորհրդի (այսուհետ՝ Խորհուրդ) 3-րդ նիստը, հեռավար կարգով, հետևյալ օրակարգով՝

Օրակարգ՝

1. Կոռուպցիայի կանխարգելման հանձնաժողովի անդամի թափուր պաշտոնում թեկնածուի ընտրության մրցույթի փաստաթղթային փուլի ավարտի հաստատում, հայտերի հաստատում կամ մերժում
2. Հարցազրույցի անցկացման վայրի և ժամկետի սահմանում,
3. Հավակնորդների՝ հարցազույցի փուլին մասնակցելու հերթականության սահմանում:

Խորհրդի հինգ անդամներից նիստին մասնակցում էին հինգը՝ Արուսյակ Ջուլհակյանը, Արուս Հայրապետյանը, Անդրանիկ Եղոյանը, Արթուր Հովսեփյանը և Հարութ Ակլունցը: Նիստին մասնակցում էր նաև ԱԺ աշխատակազմից Հովհաննես Յուքինյանը՝ նիստի արձանագրումն ապահովելու համար:

Օրակարգի 1-ին հարց	Խորհուրդն ուսումնասիրեց և արձանագրեց, որ Եփրեմ Կարապետյանի բացակայող բժշկական փաստաթուղթը ներկայացված է, և, որ Կարեն Հակոբյանից ստացվել է դիմում առ այն, որ վերջինս չեղարկում է իր նախորդ դիմումը և չի մասնակցում մրցույթին :
Խորհրդի որոշումը	*Խորհուրդը քվեարկությամբ որոշեց հաստատել մրցույթի փաստաթղթային փուլի ավարտը և հաստատեց հայտերը, ըստ որի՝ մրցույթի հարցազրույցի փուլ են անցնում հավակնորդներ Սուրեն Բաբայանը, Եփրեմ Կարապետյանը և Արկադի Մանուկյանը:* *Կողմ՝ 5, դեմ՝ 0*
Օրակարգի 2-րդ հարց	Քանի որ Խորհրդի նիստերի անցկացման վայրը օրենքով սահմանված է ԱԺ շենքը, ուստի առաջարկվեց հարցազրույցը անցկացնել ԱԺ վարչական շենքում: Հարցազրույցը առաջարկվեց անցկացնել բարեվարքության

	վերաբերյալ ուսումնասիրություն իրականացնելու նպատակով կատարված հարցումների պատասխանները ստանալուց հետո 14-օրյա ժամկետում:
	Խորհուրդը քվեարկությամբ որոշեց հարցազրույցը անցկացնել ԱԺ վարչական շենքում: Հարցազրույցը որոշվեց անցկացնել բարեվարքության վերաբերյալ ուսումնասիրությունը իրականացնելու նպատակով կատարված հարցումների պատասխանները ստանալուց հետո 14-օրյա ժամկետում: *Կողմ՝ 5, դեմ՝ 0*
Օրակարգի 3-րդ հարց	Առաջարկվեց սահմանել հավակնորդների՝ մրցույթի հարցազրույցի փուլին մասնակցության հերթականությունը՝ ըստ դիմումները ներկայացնելու ժամանակագրության կամ այբբենական կարգով:
Խորհրդի որոշումը	*Խորհուրդը քվեարկությամբ որոշեց սահմանել հավակնորդների՝ մրցույթի հարցազրույցի փուլին մասնակցության հերթականությունը՝ ըստ այբբենական կարգի:* *Կողմ՝ 5, դեմ՝ 0*

Նիստը վարող՝ Ա.Հովսեփյանը

Նիստի քարտուղար՝ Հ. Յուքինյան